Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 16 (107) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 16 (107)

Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ

# ԻՆՉՊԵՍ ԽՆԱՄԵԼ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾԵԼ ՑՈՒԼԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ—19[illegible]

№ 16 (107) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 16 (107)

Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ

# ԻՆՉՊԵՍ ԽՆԱՄԵԼ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՑՈՒԼԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ԵՐԵՎԱՆ 1930

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 22
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 5790 (Բ)
ՏԻՐԱԺ 2000

## ԿԱԹՆԱՏՈՒ ՀՈՏԸ ՑՈՒԼԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԹՎՈՎ ԱՊԱՀՈՎԵԼԸ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԽՆԴԻՐ Է

Սովետական Հայաստանի կաթնատու տավարի ընդհանուր թիվը 230000 գլուխ է՝ կով և մատակ։ Կաթնատու տավարի այս թիվը սպասարկելու համար մենք ընդամենը ունենք 3200 ցուլ և գոմեշ (արտադրողներ)։ Այսպիսով՝ մի ցուլին միջին թվով ընկնում է ավելի քան 70 կով։ Այն ինչ ազատ զուգավորման պայմաններում, վոր գոյություն ունի մեզանում, մի ցուլին պետք է 30—35-ից ավելի կով չընկնի։ Այդպիսի բեռնավորման աննորմալ վիճակն ավելի կատաստրոֆական, յեթե նկատի առնվի, վոր վերոհիշյալ 3200 արտադրողները պետք է միաժամանակ սպասարկեն նաև 2 տարեկանից բարձր յերինջներին, վորոնց թիվը Հայաստանում 52.000 գլուխ յե հասնում։

Արտադրողների չափազանց բեռնավորման այդպիսի պայմաններում զարմանալի չէ, վոր կաթնատու հոտի ստերջության թիվը 25 և ավելի տոկոսի յե հասնում մի հանգամանք, վոր մեր անասնապահության հսկայական վնասներ է հասցնում։ Մենք այստեղ դեռ չենք խոսում մեր արտադրողների վորակի մասին, վոր նույնպես շատ թերություններ ունի։

Այդպիսի վիճակը այլևս չի կարելի հանդուրժել։ Անհրաժեշտ է հարվածային կարգով վերացնել ցուլերի պակասը ու մեր կաթնատու տավարն ապահովել բարձրորակ արտադրողների անհրաժեշտ քանակով։ Առաջիկայում մեր նպատակը պետք է լինի մեր ամբողջ յերկիրը ծածկել ցեղական արտադրողներ ունեցող կոլտնտեսային-կոոպերատիվ բեղմնավորման կայանների ցանցով, վորով կբավարարվեն մեր յուրաքանչյուր գյուղի կաթնատու հոտի ցուլերի պահանջը։

*) Բեռնավորման այս նորման վերաբերում է նաև գոմեշներին ու մատակներին։

Այդ պահանջում է արագ զարգացող արդյունաբե-րությունն ու քաղաքը, վորոնց պիտի տալ անասնա-բուծության արդյունքներ՝ միս, յուղ, կաթնամթերքներ յեվ կաշի:

## I. ԼԱՎ ՑՈՒԼԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՒՄ Է ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑԵԿԱՄՈՒՏԸ *)

Հայտնի յե, վոր կովի կաթնատվությունը ժա-ռանգաբար է անցնում: Կան ցուլեր, վորոնք ավելաց-նում են կաթնատու հոտի արդյունավետությունը: Այս-պես, որինակ, յեթե տվյալ ցուլի մայրը տարեկան տա-լիս եր 1800 կիլոգր. կաթ, իսկ նրա աղջիկը տալիս է 2400 կիլոգր., ապա այդպիսի ցուլը բարելավող է կոչվում: Միևնույն ժամանակ կան նաև վատթարացնող ցուլեր, վորոնց մայրն ավելի կաթնատու յե լինում, քան նրան-ցից ծնված աղջիկները: Դրա համար էլ ցուլը նախ քան հոտի մեջ թողնելը, անհրաժեշտ է ստուգել թե նա հոտը բարելավող է, թե վատթարացնող: Ցուլերին այդպի-սի ստուգման պիտի յենթարկեն ցեղական անասնաբու-ծարանները, խորհրդային տնտեսություններն ու կոլեկ-տիվ տնտեսությունները:

Այսպիսով, լավ ցուլը հսկայական նշանակություն ունի կաթնատնտեսական արդյունաբերության համար.

Բարձր արդյունավետություն ունեցող ծնողներից առաջացած, առողջ ցուլեր պահիր՝ սերունդի համար:

Լավ ցուլ ստանալու համար պետք է սերունդի հա-մար կաթնատու կովերից առաջացած, առողջ ամրա-կազմ ցուլիկներ ընտրել:

Ընտրության ժամանակ պետք է նախապատվու-թյուն տալ աշնանը ծնված ցուլիկներին, վորովհետև նրանք ավելի պնդակազմ են լինում: Ցեղացուի համար ընտրված ցուլերին պետք է լավ կերակրել ու լավ պահել մինչև սեռական հասունության հասնելը (1—1½ տարե-կան):

Առաջին յերկու-յերեք ամիսը, վորպես կանոն, ցու-լիկին անհրաժեշտ է ամբողջ կաթ տալ: Սովորաբար սրա-

*) Ամենալավ ցուլ ասելով հասկանում ենք այնպիսի արտադ-րողներ, վորոնք ստացված են մատակներից: Կաթնատու մա-տակներ պահելուն մենք խոշոր նշանակություն ենք տալիս:

կան տեսք և ցուլիկին կաթ տալ իր կենդանի քաշի —ի չափ: Թե լավ ցուլ ստանալու համար մոր քաշն



Նկ. 1

Ցերեֆ որակով լավ զարգացած ցուլիկ

խոշոր նշանակություն ունի առատ կերակրումը, այդ կե-րակրումն է նրանից, որ ծծկերության շրջանում մատղաշ ցուլիկ-ներին սովորաբար կաթ են տալիս մինչև 6 ամսական դառնա-լը, այդ ժամանակամիջոցում խմեցնելով նրան մինչև 1200 կիլոգրամ կաթ: Երրորդ շաբաթից սկսած և մատ-ղաշ ցուլին չոր խոտի և ուժեղ կերի սովորեցնել:

Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է նրան օրա-կան տալ 10 գրամ աղ և նույն չափ կավիճ:

Վեց ամսական դառնալուց հետո ցուլերին պետք է զատել էգ հորթերից, որովհետև նրանք կարող են բեղմնավորել վերջիններին:

Ամառը մատղաշ ցուլերին պետք է լավագույն արո-տի հատկացնել:

Այս կերպ աճեցրած ցուլը $1^1/_2$ տարեկան հասակում լավ արտադրող կդառնա:

## 2. ՑՈՒԼԵՐ ԲՈՒԾԵԼՈՒ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԵՔ

*Ցուլերի պակասը վերացնելու համար մղված պայքարում կոմյերիտը պետք է առաջին շարքերը բռնի։*



Նկ. 2

Մանկական ակումբի անդամը՝ բուծած ցուլի հետ

### ՑՈՒԼԻԿԻ ԱՆՀԱՏԱ

№ Ցուլիկի ............ Սեռը ............

Անունը ............ Ծնելու ժամանակը ............

Ցեղը ............ Գույնը ............

| Ամիս և թիվ | Ինչ կերակուր | Ժամանակաշրջանի մեծ թիվը | Ամսում | | Օրական կեր- | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ժամանակաշրջանում | Մեկ օրում | Կաթ | | Ուժեղ | |
| | | | | | Ամբողջ | Քաշած | Կոմբինիր. ուժեղ | Քաշած |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | | | | | |

Նա՝ տեղական ագրոնոմի, ջրատեխնիկի, կոնտրոլ ասիստենտի և գյուղխորհրդի հետ միասին պետք է գյուղի դպրոցական յերիտասարդությանը մասնակից դարձնի ցուլեր բուծելու աշխատանքին՝ ցուլեր բուծելու յերխա- խմբակներ կազմակերպելու միջոցով: Այդպիսի կազմակերպությունը շատ է տարածված Ամերիկայում և մեր միության մի քանի շրջաններում:

Այդպիսի խմբակների կամ, այսպես ասած՝ մանկական ակումբների անդամներն իրենց վրա յեն վերցնում ցուլիկի բուծման գործը՝ տեղի ագրոպերսոնալի ցուցմունքներով լավ բուծված ցուլիկների միջոցով. ցուցահանդեսներ են կազմակերպում, ուր մրցանակներ են տրվում լավ բուծված ցուլիկներ պահող յերեխաներին:

Ցուլիկներ բուծելու մանկական ակումբների անդամներն իրենց բուծած ցուլիկների կենդանի քաշի և կերակրման պարբերական գրանցումներ են կատարում և տարվա վերջին այդ գրանցումներով յեզրակացություններ են անում ստացված արդյունքների վերաբեր-

## ԿԱՆ ՔԱՐՏ

Տեր ............ Գավառ ............

Գյուղը ............ Շրջան ............

Ծագում հայրը ............ Մոր կիթը ............

| ...ցված և կիլոգրամներով | | | | | | | Կերերի գինը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| կեր | | | | | | | | |
| Թեփ | | Խոտ | | Արմատապտուղ | Կանաչ կեր | Արոտ | | |
| 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| | | | | | | | | |

մամբ: Գրանցումներն անհրաժեշտ է կատարել հետևյալ ձևով՝ ամսական գրանցումների և տարեկան արդյունքների վերաբերմամբ:

## 3. ՑՈՒԼԻ ՀԱՄԱՐ ԲՈԼՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՍՏԵՂԾԵՑԵՔ, ՎՈՐ ՆԱ ԻՐ ԼՐԻՎ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԻ

Ցեղական ցուլի գլխավոր հատկությունը, վորի համար մենք նրան գնահատում ենք, այդ նրա կովեր լավ բեղմնավորելու ընդունակությունն է: Հայտնի յե, վոր հաճախ ցեղական բարձրարժեք ցուլը հազիվ 1–2 տարի աշխատելուց հետո թուլանում և կովերին սարքելու անընդունակ է դառնում: Այդ նշանակում է, վոր ցուլը լավ չեն ոգտագործել և ժամանակից առաջ նրան անաշխատունակ են դարձրել:

Կանոնավոր և լավ պահելու դեպքում ցեղական ցուլը կարող է 6–8 տարի աշխատել՝ չկորցնելով բեղմնավորելու իր կարողությունը:

Պետք է հիշել, վոր ցեղական ցուլն իր սովորական սպասարկման ամբողջ ժամանակվա ընթացքում կարող է 500—600 կով զուգավորել, իսկ յեթե նա անկանոն ոգտագործվի, այդ դեպքում իր ամբողջ սպասարկման ընթացքում հազիվ 100 կով զուգավորի, մի հանգամանք, վոր շատ վնասակար է տնտեսության համար: Դրա համար էլ ցեղական ցուլին պետք է տալ այն բոլոր բարենպաստ պայմանները, վորոնք անհրաժեշտ են նրա աշխատունակությունը յերկար չափով պահպանելու համար:

Ցուցիչների բուժման տարեկան արդյունքները

.............................. գյուղական տրաագրական ընկերությ.ն

| №№ ըստ կարգի | Ցուցիչի № ը | Ամսանը | Կենդանի քաշը կ.գ. | | | | | Օրական աճումը | | | Տարեկան ընդամենը տված է կերակրամով | | | | | | | | | | Ժամանակը | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ծնվելիս | Առաջի փնալիս | Գոմում պահելու վերջացնելիս | Առաջի արոտի ժամին | Գոմում կերակրելու սկսելիս ու արոտի ժամին | Գոմում պահելու ըշանում | Արոտում պահելու ըշանում | Տարվա ընթացքում | Կաթ Ամբողջ | Կաթ Քամած | Ուժեղ կեր | | Կոպտ կեր | | Արմատապտուղներ | Կանաչ կեր | Արոտի կեր | Կերի ամբողջ միավոր | Զուտ կերք. մարսել. սպիտ. | Գոմում պահելու օրերը | Արոտում պահելու օրերը | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Վորոնք են ցեղական ցուլի աշխատունակության պահպանման գլխավոր պայմանները:

Ցուլին անհրաժեշտ է ընդհարձակ և լուսավոր գոմ տրամադրել՝ շարժումներ անելու համար ցանկապատած բակով: Այդ ցուլին պետք է կանոնավոր կերակրել ու խնամել: Երրորդ պայմանը ձեռնաքաշ զուգավորում կիրառելն է:

## 4. ՑԵՂԱԿԱՆ ՑՈՒԼԸ ԼՈՒՍԱՎՈՐ ՅԵՎ ՉՈՐ ԳՈՄՈՒՄ ՊԱՀԵՑԵ՛Ք

Յուրաքանչյուր կենդանու գոմը հարկավոր է, գլխավորապես, նրան անբարենպաստ յեղանակներից պաշտպանվելու համար: Ցուլերը կարող են կովերի հետ միևնույն գոմում տեղավորվել, կամ էլ նրանց կարելի յե հատուկ գոմ հատկացնել:

Ցուլերի գոմը պետք է չոր ու լուսավոր և քամիներից պաշտպանված լինի: Հատակը կարող է հողից լինել, բայց այս դեպքում պետք է ամեն օր ցամքարը փոխել: Հողի հատակը պետք է ունենա միզատար առվակներ:

Ցուլի գոմը պետք է անմիջապես կապ ունենա ցանկապատած բակի հետ, ուր կարողանա ցուլը շարժումներ անել:

Ցուլերի ախոռը պիտի այնպես չլինել, վոր նրանք առանձին ու միայնակ չլինեն, վորովհետև այդ նպաստում է ցուլերի կատաղի դառնալուն և այլ վատ սովորությունների, ինչպես, օրինակ, օնանիզմին:

## 5. ՑՈՒԼԵՐԻՆ ԲԱՎԱԿԱՆԱՉԱՓ ԿԵՐ ՏՎԵ՛Ք

Ցեղական ցուլին պետք է այնպես կերակրել, վոր նրա ցեղական մարմինը պահպանվի, այսինքն չգերանա, հակառակ դեպքում նա ծանրաշարժ և կովերի վրա քաշելու անընդունակ կդառնա: Ցեղական ցուլին պետք է կենսապահ կեր տալ և, բացի այդ, զուգավորման շրջանում պետք է տալ նաև լրացուցիչ կեր՝ սպերմա (սերմ) պատրաստելու համար՝ անհրաժեշտ քանակով:

Սովորաբար կարելի յե ընդունել, վոր յուրաքանչյուր 100 կիլոգրամ կենդանի քաշին անհրաժեշտ է տալ

մեկ կիլոգրամ կերի միավոր: Այսպես, օրինակ, եթե ցուլը կշռում է 500 կիլոգրամ, նրան պետք է տալ 5 կիլոգրամ կերի միավոր՝ կենսապահ կեր:

Կերի մեկ միավորին ըստ իր սննդարժեքի հավասար է 1 կիլոգրամ գարին կամ 2½ կիլոգրամ սարի չոր խոտի: Դրա համար էլ 500 կիլոգրամ կշռող ցուլին մենք պետք է տանք 10 կիլոգրամ չոր խոտ, վոր 4 կերային միավոր է կազմում և 1 կիլոգրամ գարի (կամ այլ հավասար արժեքի կեր), վոր միասին կկազմի 5 կերային միավոր կենսապահ կեր:

Զուգավորման ժամանակաշրջանում; բացի կենսապահ կերից, ցուլին պետք է տալ նաև մեկ կերային միավոր ավելի կեր, այսինքն՝ մեկ կիլոգրամ գարի, քուսպ կամ վարսակ:

Վորքան բազմազան է ցուլի կերի ռացիոնը, այնքան նա լավ է այն յուրացնում: Դրա համար էլ, բացի հիշված կերերից, պետք է նրան տալ նաև հյութալի կերեր, օրինակ, սիլոս կամ արմատապտուղներ՝ օրինակ վոչ ավելի, քան 1 կերային միավոր, այսինքն՝ 8—10 կիլոգրամ: Բացի այդ, ցուլին պետք է մաքուր ջուր և օրական 20—25 գրամ աղ տալ:

Ամառը ցեղական ցուլին անհրաժեշտ է լավ արոտ հատկացնել:

Հիմնական կանոնը, վոր պետք է պահպանել ճշտորեն այդ այն է, վոր ցուլին կեր պետք է տալ միշտ վորոշած ժամին, չփոփոխելով կերակրելու համար սահմանված կարգը: Մսուրը՝ կեր տալուց առաջ և հետո պետք է լավ մաքրել:

## 6. ՑՈՒԼԻ ՄՌՈՒԹԻՆ ՀՆԱԶԱՆԴԵՑՆՈՂ ՕՂԱԿ ՀԱԳՑՆԵԼԸ

Ցեղական ցուլերը շատ ծանրամարմին կենդանիներ են: Նրանք, ինչպես օրինակ, շվից և սիմենթալ ցեղի ցուլերը, հաճախ կշռում են յուրաքանչյուրը 10 ցենտներ և ավելի: Վորպեսզի ցեղական ցուլերը միանգամայն յենթարկվեն խնամող անձանց, պետք է նրանց ամենազգայուն մասին, այսինքն՝ քթի փափուկ մասում հնազանդեցնող օղակ հագցնել:



Նկ. 3
Քթի օղ՝ իր բանալիով




Նկ. 4
Ինչպես հագցնել օղը ցուլի քթի մեջ

Հնազանդեցնող օղակ հագցնելու համար, նախ ծակում են քթի միջը, բայց ոչ քթի կոճիկը, ապա հագցնում և ամրացնում են օղը: Այդ գործողությունները լավ է կատարի անասնաբույժը կամ բուժակը: Օղը հագցնելուց հետո պետք է հատուկ կաշվի փոկով այն բարձրացրած պահել, փոկը պոզերին ամրացնելով: Գոմերից էլ անհրաժեշտ է օղի միջով շղթա կամ կաշվի փոկից կապ անցկացնել:

Պետք է շարունակ նկատի ունենալ, որ ցուլը շատ հնազանդ կենդանի է, եթե նրա հետ մեղմ ու փաղաքշանքով են վարվում: Իսկ եթե նրա հետ կոպիտ են վարվում, նա չար ու վտանգավոր է դառնում, ու հնարավոր չի լինում նրա ցեղական բարեմասնություններից օգտվել:

Ցուլը շատ է ընտելանում իրեն խնամող անձանց, որա համար էլ նրանց փոփոխելը ցանկալի չէ:

## 7. ՇԱՐԺՎԵԼՈՒ ՅԵՎ ԹԵԹԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵՑԵ՛Ք ՑՈՒԼԻ ՀԱՄԱՐ, ՎՈՐ ՆԱ ԻՐ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԻ

Առանձնացված կապված ու շարժումներ անելու հնարավորությունից զուրկ ցեղական ցուլերը շատ շուտով



Նկ. 5
Ցուլերին թեթև աշխատանքի ժամին

կորցնում են իրենց աշխատունակությունը և անպետք են դառնում կաթնատու հոտին սպասարկելու:

Դրա համար էլ անհրաժեշտ է, վոր նրանք շարժում-ներ գործեն յեվ նույնիսկ թեթև աշխատանք կատարեն։ Մինչև անգամ ձմռանը, ինչ յեղանակ էլ ուզում է լինի, ցուլին պետք է մի քանի ժամ շարժվելու հնարավորու-թյուն տալ։ Միաժամանակ, յերբ ցուլը զուգավորմամբ չի զբաղված, անհրաժեշտ է նրան թեթև աշխատանք տալ անտեսության մեջ։ Դրա համար ցուլերին պետք է աստիճանաբար վարժեցնել սայլ, գութան լծելու և այլ թեթև աշխատանքներին։ Այսպիսի աշխատանքն ու շար-ժումները շատ են նպաստում ցեղական ցուլի լրիվ աշ-խատունակության պահպանելուն։

## 8. ՁԵՌՆԱՔԱՇ ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄ ՄՏՑՐՈՒ

Գյուղացիական անտեսության մեր պայմաններում սովորաբար տարածված է ազատ զուգավորումը, վորի ժամանակ ցուլն ազատ թողնվում է հոտի մեջ։ Այս դեպ-քում մի ցուլին չափազանց շատ կով է հասնում։ Այդ ուժասպառ է դարձնում ցուլին, հատկապես զուգավոր-ման յեռուն ժամանակաշրջանում։ Ազատ զուգավորման դեպքում տեղի յե ունենում նաև մի յերևույթ, վորը չափազանց ուժասպառում է ցուլին և նրան աշխատանքի անընդունակ է դարձնում։ Հոտի մեջ մի քանի այնպիսի կովեր են պատահում, վորոնք ձվարանների հիվանդու-թյան պատճառով շարունակ սեռական ցանկություն են ունենում, մի հանգամանք, վոր ստիպում է ցուլին շա-րունակ լարված վիճակի մեջ լինել։ Բացի այդ, ազատ զուգավորման դեպքում հնարավոր չի լինում հետևել, թե այս կամ այն կովը վո՞ր ցուլից է քաշվել, վորպեսզի հնարավոր լինի գրանցել և ցուլի վարակը պարզել։

Յեվ, վերջապես, ազատ զուգավորման դեպքում մի ցուլին 30—35 կովից ավելի չպիտի տալ, վոր միանգա-մայն անձեռնտու յե, քանի վոր ցուլերի թիվը մեզնում առանց այն էլ շատ պակաս է։

Այդ բոլոր նկատառումներով պետք է անցնել ձեռ-նաքաշ զուգավորման։

Ձեռնաքաշ զուգավորման դեպքում ցուլը հոտի մեջ ազատ չի թողնվում, այլ կամ ցուլի յեկող կովերն են բե-րում դրա մոտ, կամ էլ ընդհակառակը։ Ձեռնաքաշ զու-

զավորման դեպքում ցուլը յերկար տարիներ պահպա-նում է իր աշխատունակությունը: Ձեռնաքաշ զուգա-վորման ժամանակ մի ցուլի կարելի յե տալ 80–100 կով:

Ցեղական ցուլը ձեռնաքաշ զուգավորմամբ ոգտա-գործելիս անհրաժեշտ է հետևյալ կանոնները պահպա-նել:

1. Ցուլը զուգավորման թողնել 1½ տարեկանից վոչ պակաս հասակում:

2. Մի օրվա ընթացքում, ցլերի շրջանում մի ցուլը պետք է յերկու զուգավորումից ավելի չանենա: Միև-նույն կովին իրար յետևից յերկու անգամ չպետք քաշել. վորովհետև յեթե կովը ցուլի յե գալիս, հենց առաջին անգամից բեղմնավորվում է:

3. Ցուլին, աշխատելու առաջին տարին, ամսա-կանից պակաս պետք է բեռնավորել:

4. Շաբաթվա մեջ ցուլը մի որ պետք է հանգստանա:

5. Վարորդը պետք է անասնաբուժի կամ բուժակի միջոցով քննել տալ կովերին, պարզելու՝ թե նրանք արդ-յոք չունե՞ն զանազան հիվանդություններ:



Նկ. 6

Զուգավորման դազգյահ

Վերջին կանոն, յուրաքանչյուր զուգավորումն ան-միջապես պետք է գրանցել զուգավորման հատուկ մատ-յանում, իսկ կովատիրոջ տրվի հատուկ զուգավորման վկայական:

Եթե հոտը ամառային արոտներումն է գտնվում, ցուլերը պետք է պահել հոտից վոչ չատ հեռու, կապած արածացնել, որոնցից մի քանի անգամ փոխարկելով արածելու տեղը: Կարելի յե նաև ցանկապատած արոտամաս հատկացնել ցուլին: Զուգավորման ժամանակ ցուլին կապը բանում են մոտեցնում ցուլի յեկող կովի կամ էլ ընդհակառակը, կովն են տանում ցուլի մոտ:

Փոքրիկ հեչառայների համար հատուկ զուգավորման դազգյահ են շինում:

## 9. ՊԱՀՊԱՆԵՑԵՔ ՑՈՒԼԵՐԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Լավ է հիվանդությունների առաջը վաղորոք առնել, քան թույլ տալ, վոր տարածվեն դրանք և առողջությանն վնասներ տան: Հաճախ անուշադրության հետևանքով կարելի յե ամբողջ հոտը կորստաբեր հիվանդությամբ վարակել: Սովորաբար այդ պատահում է այն դեպքում, յերբ հիվանդ կովը զուգավորում են ցուլի հետ, իսկ վերջինիս զուգավորման միջոցով վարակում է ամբողջ հոտը: Այդ տեղի յե ունենում այնպիսի հիվանդությունների վերաբերմամբ, վորպիսին, որինակ, վագինիտն է, վարակիչ վիժումը և այլն: Այսպիսի դեպքերում բժշկական քննությունն անհրաժեշտ է:

Յեթե հիվանդության կասկած կա, պետք է յուրաքանչյուր զուգավորումից հետո ցուլի սեռական անդամը լվանալ կրեոլինի մեկ տոկոսային լուծույթով: Միաժամանակ պետք է ցուլի գոմը պարբերաբար ախտահանել չհանգած կրով և կենդանիներին մաքուր պահել:

Պետք է բոլոր միջոցները ձեռք առնել, վոր ցուլերի նկատի վերաբերմամբ անասնաբուժական մշտական հսկողություն լինի, հակառակ դեպքում՝ վտանգն հիվանդությունների ու կենդանիների համաճարակը հաճախակի կլինեն:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0002593

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

625

A II/24035

05կ.